

Լեզոնովիկայի պետական կարգավորման առանձնահատկությունները ԼՂՀ-ում անցման
ժամանակակից փուլում
Ռ. Յ. Մանգասարյան

Հոգվածում դիտարկվում է տնտեսության պետական կարգավորման արդյունավետ համակարգի ձևավորման հիմնահարցերը և դրա առանձնահատկությունները ԼՂՀ-ում արդի փուլում:

ԼՂՀ Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման արդի բեկումնային փուլում կարևորվում է տնտեսության պետական կարգավորումը: Նախկին խորհրդային Միության փլուզման արդյունում ձևավորվել են տնտեսությունների, այդ թվում ԼՂՀ-ի, տնտեսություններ յուր ջնջումներ ապրել: Այն իր վրա կրեց ինչպես պատմության այնպես էլ խորհրդային Միության տնտեսական բարեփոխումների անփառունակ ազդեցությունը, նաև համակարգի փլուզման դժվարությունները, տնտեսական խոր ճգնաժամից դուրս գալու, տնտեսության ամրապնդելու ու զարգացնելու միջոցառումների մինչև օրս շարունակվող որոնումները:

Հասարակության համար հիմնադրական մի շարք սխալներից հետո կարելի է հաստատապես ամրապնդել հանրապետությունում շուկայական տնտեսության պետական կարգավորման արդյունավետ համակարգի ձևավորումը, այդ թվում պետական սեփականության կառավարման արդյունավետության բարձրացումը, անհետաձգելի միջոցառումների իրականացումը: Անցումային ժամանակահատվածում իրականացվող փոփոխությունների տարածվածության և մարտավարության մշակման ժամանակ բացառիկ կարևորություն է ընդունում տնտեսության վրա պետության կարգավորիչ դերը և ազդեցությունը:

Ակնհայտ է, որ պետության կարգավորիչ դերի պահանջ գոյություն ունի մեր կյանքի գրեթե բոլոր բնագավառներում, սակայն ասվածը պետք է դրսևորվի պետության, որպես իր սեփականության արդյունավետ տնտեսության կառավարողի, գործառնության իրականացման ժամանակ՝ շուկայական մրցակցության և բազմակցույթի սեփականության պայմաններում, որտեղ ոչ պետական սեփականությունը թողարկվող արտադրանքի /մատուցած առաջությունների/ ծավալում գերազանցում է իրենցին: Այդ կապակցությամբ մեծանում է պետական ձեռնարկող արդյունավետության բարձրացման խնդրի լուծումը և սեփականության ձևերի փոփոխության վրա ներգործությունը:

Ցանկացած երկրի տնտեսության զարգացման հիմնական խնդիրը պետք է լինի ժամանակի պահանջներին համապատասխան տնտեսական քաղաքականության ընտրությունը: Տնտեսական քաղաքականության ձևի բազմազան են. այնքան բազմազան, որքան կարող են լինել առանձին վերացած ամեն մի երկրի տնտեսական սոցիալական, քաղաքական, ինչպես էլ նաև պատմափոխականության պայմանները: Հարկ է ընդգծել, որ տնտեսական քաղաքականության մեծաշնորհը պետության ձեռքում է կենտրոնացնելը, շուկայական կարգավորման նվազեցումը սահմանափակելը տնտեսության անցումային ժամանակահատվածում կարող են արագացնել տնտեսության անհաջողակ խնդիրների լուծումը, իսկ տնտեսության վերականգնման, կայունացման ու զարգացման գործընթացը երկար չի տևի: Այն միաժամանակ կարող է բախվել այնպիսի հիմնախնդրի հետ, ինչպիսին նոր տեխնոլոգիաները շուկայական հարաբերությունների թույլ ընկալումն է: Այդ տնտեսական նպատակահարմար է այնպես տնտեսական քաղաքականության իրականացումը, որը հիմնվում է պետական ու շուկայական կարգավորող գույզահեռ գոյության վրա՝ նախապատվությունը թողնելով պետությանը: Տվյալ դեպքում պետությունն օգտվում է իր անհատական կարգավորման արդյունավետության հնարավորությունից: Այսպիսով տնտեսության վերականգնման, կայունացման ու զարգացման գործընթացը տեղի կունենա դանդաղ, բայց հաստատուն քայլերով: Մակայն ցանկացած երկրի, առավել ևս զարգացող երկրի տնտեսության կառավարման քաղաքականության ընտրության և կիրառման արդյունավետության չափը պայմանավորված է երկրի բնակչության աչքաբլի և մոտ ապագայի կենսական նշանակության խնդիրների լուծման նկատմամբ տեղի կառավարման տնտեսական քաղաքականությունը ընտրողների մոտեցումներից: Դա բարդ, քայլ կա խնդիր է, քանի որ երկրի տնտեսական քաղաքականության արդյունավետությունը մեծապես կախված է նրա օբյեկտիվ ու անշահախնդիր գործունեությունից:

Ներկա պայմաններում ԼՂՀ Հանրապետության տնտեսության կարգավորման տարբերակ կարող է ծառայել միջին ռազմավարությունը, համաձայն որի տնտեսության կառավարում իրականացվում է պետության ու շուկայի տնտեսական լծակների գույզահեռ գործունեության պայմաններում պահպանելով շուկայի նկատմամբ պետության վերահսկողությունը: Նպատակահարմար է հիշատակել, որ 20-րդ դարում աշխարհի ցանկացած երկիր ճգնաժամից տնտեսության դուրս բերումը, կայունացումն ու զարգացումն իրականացվել են պետության ակտիվ միջամտությամբ:

ԼՂՀ-ում իրականացվող տնտեսական բարեփոխումների սկզբից մինչև 1994թ. արժանազավել է տնտեսական կտրուկ անկում, որի պատճառները հիմնականում կապված էին տարածաշրջանի ռազմաքաղաքական և իրավիճակի, հիմնական հաղորդակցման ուղիների աշխատանքի խաթարման, էներգետիկ համակարգի ճգնաժամի արտաքին քաղաքական և տնտեսական քաղաքականություն ուղեմիջների պարտադրված փոփոխությունների:

խաթկնում ձևավորված տնտեսական կապերի կտրուկ խզման հետ: Նշված գործընթացների գործոնային ազդեցությունը բավականաչափ խորը հենք թողեց ներկյա տնտեսական բարեփոխումների ընթացքի վրա:

Սկսած 1994թ-ից՝ հաջողվեց կասեցնել ներկյա տնտեսական անկումը և ապահովել մակրոտնտեսական ուղղված կայունության, իսկ 1995-1998թթ. արձանագրվեց արդյունաբերության, գյուղատնտեսության, կապիտալ շինարարության, առևտրի և սպասարկման ոլորտների պարբերաբար աճ, այնուհետև 1999թ-ից՝ աճի տեմպերը խիստ ուժեղացան: ԼՂՀ-ում ՀՆԱ-ի ամենաբարձր աճի տեմպը թուր անցած տարիների ընթացքում արձանագրվեց 1999թ-ին: 1999թ. 1998թ. համեմատ ՀՆԱ-ը կրճատվեց 3,3 % -ով: 2000թ. աճի տեմպը կազմել է 7,0 %:

1995-1998թթ., կապված տնտեսության կայունացման գործընթացների հետ, աճեցին օտարերկրյա ուղղակի ներդրումները: Հարկ է ընդգծել, որը ԼՂՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության պետական արդյունք տվյալների համաձայն, 2000թ. հանրապետության տարածքում գործող տնտեսավարող սուբյեկտների 80, 8%-ը հիմնվում են մասնավոր սեփականության վրա: Մասնավոր ձևերարկությունների 1,2%-ը հիմնվում են արտերկրյա քաղաքացիների սեփականության վրա, իսկ 0,3%-ը՝ համատեղ սեփականության վրա: 1999թ. 1998թ. համեմատ մասնավոր սեփականության վրա հիմնված ձևերարկությունների տնտեսվարող կշիռը նվազել է 4,2%-ով:

Այնուամենայնիվ, հանրապետությունում արձանագրված տնտեսական անկման պատճառները կրում են արտաքին և ներքին քաղաքական գործընթացների շոշափելի ազդեցությունը: Սակայն դրանք հասնադրելի չեն 1991-1994թթ-ի վերջ թվաթված գործընթացների ազդեցության հետ: Այն մեծ մասամբ արդյունք է անցած 9-տարեկների ընթացքում իրականացված բարեփոխումների գործընթացներում տեղ գտած բազմաթիվ սխալների և բացողոմների:

Դեռևս հաջողվում է պահպանել վերջին տարիների ամենաբարձր ձևերարկման մակրոտնտեսական կայունությունը, որը բնութագրվում է ցածր աղանձով և գործազրկության ցածր մակարդակով: Մյուս կողմից, սղանք սղանք զգալիորեն բնութագրվող մակրոտնտեսական կայունությունը կարծես դարձել է ինքնանպաստակ, որի արդյունքում արձանագրվում են ղեկավարչության միտումներ: 1998թ. միջին սղանք կազմել 1,1%: 1999թ. հիմնականում արձանագրվեց ղեկավարչության միտումներ՝ 0,1%-ի չափով: Այդ միտումը պահպանվեց նաև 2000թ. և արդյունքում արձանագրվեց 2,5% միջին սղանք:

Մակրոտնտեսական կայունության ապահովումը, ինչ խոսք, պետական կարևորագույն և առաջնահերթ խնդիրներից է, որի դրական ներգործությունը առավել շոշափելի կլին 7-10% կառավարելի սղանքի սահմաններում: Սղանք կարող է խլացնել արտահանողներին և արտադրանքի որակի անհրաժեշտ բնութագրիչների առկայության ոլորտում չափային նյութում նրանք համար արագաձայն առավել բարձր մրցունակություն:

Տնտեսության ներկայիս կացության գերխնդիրներից է աղքատության հիմնախնդիրը, քանի որ բնակչության մեծ մասն առանցքային եկամուտները ցածր են ոչ միայն սղանքային, այլ նաև պարենային գաբարյուրի նվազագույն մակարդակից: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ինչպես ՀՀ-ն, այնպես էլ ԼՂՀ բնակչության շուրջ 55%-ի եկամուտները ցածր են աղքատության շեմից: Հնդ որում, բնակչության եկամուտների կազմում աշխատավարձի տնտեսվարող կշիռը չի գերակշռում 46%-ից: Այս պարագայում արդատությունը տնտեսական աղքատության խնդրից վեր է ածվում դրա վրա բացասաբար ազդող ինքնուրույն գործոնի: Այն ուղղակի առանձնահատկություն է տնտեսական աճի համար կարևոր գործոնը՝ պահանջարկը: Հստ էության, տնտեսության իրական հատվածում աշխատող սուբյեկտները ծավալում են արտադրողի շուկան, որի աղքատները սահմանափակ են արտաքին շուկայներում և ներկյա ներքում ոչ միայն արտադրանքի որակի և ցածր մրցունակության պատճառով, այլ նաև վերը նշված՝ անբավարար պահանջարկի գործոնի հաշվին:

Աղքատությունը ոչ միայն աշխատատեղերի բացակայության արդյունք է, այն հետևանք է նաև արտադրության տեխնոլոգիական հետամնացության և աշխատանքի խիստ ցածր արտադրողականության:

Հանրապետությունում արձանագրված տնտեսական աճի հետընթացը վկայում է, որ իրականացված բարեփոխումների թուր հատվածներում չափազանց ցածր արդյունքներ: Մտնողված իրավիճակում անհրաժեշտ է ի մի բերել ներկա կացության պատճառները, ձևավորված գործընթացների պատճառահետևանքային կապերը, անկասկած պարագայում վիճակը շուկայում թուր լուծումներն ու քայլերը կլինեն ոչ ամբողջական և իրավիճակային բնույթի: Որպես հետևանք, անգամ ժամանակի առումով առավել հաջողված որոշումների կատարման վարչարարության աստիճանով և օբյեկտիվորեն սահմանափակված լինելով ժամանակի գործոնով ի վերջո արագ կապալի իրեն:

Բարեփոխումների արդյունավետության գնահատման առումով հարկ է նշել, որ թուր ոլորտներում եղել են բավականաչափ դրական, արդյունավետ լուծումներ և իրականացված քայլեր, որոնք, սակայն, գուրկ լինելով ամբողջական և համարագրված մտնողումներից ունեցել են անավարտ, թերի, որոշ ղեկավարում ուղանք բնույթի: Իրական հետևանք, անգամ ժամանակի առումով առավել հաջողված որոշումների կատարման պահանջարկի են եղել իրենց դրական ներգործության առումով, քանի որ այդ ներույթի տրամաբանական շարունակությունը կազմող մյուս հատվածն աշխատանք էր այլ բնույթի կարգավորման դաշտում և շատ հաճախ

կարգավորման հավաստի մոտեցումների հիման վրա: Իհարկև, անցումային փուլը ենթադրում է հաճախ պահանջ է ծագող խնդիրների արագացված լուծումներ, սակայն դրանք այնուհետև անհրաժեշտ է ամրագրել համառոտ հիմնարար լուծումներով:

Արդյունքում տասնամյակներում աշխարհի բոլոր երկրների տնտեսագետների ուշադրությունը բնում աչապես կոչված «ստվերային տնտեսության» երևույթի վրա: Ստվերային տնտեսությունն իր առանձնահատկ դրսևորումներն է գտնում հատկապես մաքուրմային փուլում գտնվող երկրներում: Այդ իսկ պատճառով կարևորվում այդ երևույթի արտահայտների, դրան նպաստող տնտեսական և քաղաքական գործոնների բացահայտումը, ինչպեսև ստվերային տնտեսության ծավալների գնահատումը և դրա գնահատմանն ուղղությամբ համապատասխան միջոցառումների ձեռնարկումը:

Մի շարք կազմակերպություններ իրականացրել են Հայաստանի ստվերային տնտեսության ուսումնասիրություններ, որոնք հիմնված են եղել հիմնականում ուղղակի հարցումների և աշխատանքի շուկայի լուծույթության վրա: Այս մեթոդները ենթադրում են ստվերային տնտեսության ծավալների գնահատումը՝ հիմնականմիջապես ստվերային գործունեության մասնակիցներից ստացված տեղեկատվության վրա: Հաշվարկները ցույց տվել, որ Հայաստանում ստվերային տնտեսությունը նվազագույն մակարդակի վրա է եղել 1994թ. (ՀՆԱ-ի 33%): այնուհետև այն մեծացել է՝ հասնելով իր առավելագույն ցուցանիշին 1997թ. (ՀՆԱ-ի 66,3%): 1998թ. նախորդ տարի համեմատ ստվերային տնտեսության ծավալները նվազել են և կազմել ՀՆԱ-ի 55,2%-ը: 1999թ. այն կրճատվել է և շուրջ 1%-ով, կազմելով պաշտոնական ՀՆԱ-ի 54,5%-ը:

ԼՂՀ հարկային պետական վարչության տեղեկատվության համաձայն, ԼՂՀ-ում ավելացված արժեքի հարկման արդյունավետության վերլուծությունը ցույց է տալիս, որ ստվերայնության մակարդակը 2000թ. 19% համեմատությամբ, ՀՆԱ-ի 55%-ից իջեցվել է 34%, իսկ 2001թ.՝ 26%;

1994թ. ստվերային տնտեսության, դիտարկվող ժամանակահատվածի համար, նվազագույն մակարդակի վրա էր փաստը բացատրվում է մի շարք հանգամանքներով: Դրանցից ամենախիմականներից կարելի է նշել հայկական դրամի 1993թ. նոյեմբերին չբջանառության մեջ մտնելու փաստը, ու դրա հետ պայմանավորված ստվերային գործունեության գրգռվող սուբյեկտների համար իրենց վճարումներն ամբողջովին հայկական դրամ իրականացնելու համար որոշակի ժամանակահատվածի անհրաժեշտությամբ: Դրամի փոխանակումը սկսել հետո դեռևս որոշակի ժամանակահատվածի անօրինականորեն որպես վճարման միջոց գանգվածաբար օգտագործվում էր ռուսական ռուբլին և ամերիկյան դոլարը:

Փաստորեն 1994-1998թթ. ժամանակահատվածում ստվերային տնտեսության ծավալներն ունեցել են անընդհատ աճի միտում ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ԼՂՀ-ում:

Ստվերային տնտեսության առաջացման և դրա ծավալների ընդարձակմանը նպաստող գործոններից կարելի է առանձնացնել պետական կարգավորումն ու պետության կողմից կիրառվող սահմանափակումները և կոռուպցիոն Ընդհանուր առմամբ, որքան տնտեսությունը կարգավորվող է, այնքան դրա ներքում շատ ճնշումներ կան և կարգավորումները չբջանցելու ուղղությամբ: Արդյունքում պետական կարգավորումներից չբջանցված տնտեսական գործունեության ոլորտները ուղղակիորեն վեր են ածվում ստվերայինի: Կոռուպցիան նույնպես ուղղակիորեն նպաստում է ստվերային տնտեսության ընդարձակմանը: ԼՂՀ-ում, ինչպես և անցումային տնտեսությունն ունեցող շատ այլ երկրներում, պետական կառավարման համակարգում աշխատող պաշտոնյաներին ի պաշտոնի պահպանման են այնպիսի իրավիճակներում, երբ նրանք վերահսկում են տնտեսության տարբեր ոլորտներ վերահսկման այդ իրավունքը շատ հաճախ օգտագործվում է անձնական նկատմունքներ ստանալու նպատակով: Պետական ծառայողների կողմից իրենց պաշտոնական դիրքի չարաշահման միջոցով նկատմունքներ ստանալը դրդում էր շատ առումով կարելի է համարել նաև որպես պետական համակարգի ծառայողների ցածր աշխատավարձի և անբավարար վարձի արդյունք: Պետական համակարգում գործող շատ ցածր աշխատավարձերը արդեն կարելի է համարել որպես գոյության մեջ պետական ծառայողների կողմից նկատմունքներ ստանալու այլ աղբյուր: Դրանից հարցում: Իմանական մոխառիչ հանգամանքն այն է, որ փաստորեն որոշ մարդիկ ստանում են թաքցված նկատմունքներ և դրանք չեն հայտարարագրվում հարկային մարմիններում: Դժվար թե այս ճանապարհով ստեղծված ամբողջ նկատմունք հաշվի առնվի պետական վիճակագրությունում:

Անցումային տնտեսությունն ունեցող ցանկացած երկրում տնտեսական աճ ակնկալող ծրագրերը հիմնական շեշտը դնում են արդյունաբերության զարգացման վրա: ԼՂ Հանրապետությունը չի կարող բացառություն կազմել: Երկրի կարող երկար գոյատևել օտարերկրյա վարկերի և մարդասիրական օգնության հաշվին, եթե վերջիններս հետագայում էլ ունենան ընթացիկ սպառման, այլ ոչ թե ներդրումային ուղղվածություն:

Ներդրումները հանդիսանում են տնտեսական աճի կարևորագույն խթանը: Հանրապետությունը ներդրումներն հետ կապված բարձր ժխկը, համապատասխան երաշխիքների բացակայությունը նվազ հավանական է դարձնում առաջիկա տարիներին տնտեսության մեջ արտաքին մասնավոր ներդրումների ծավալումը: Իհարկև, Անհմատա է հույսեր կապել դրսից լուրջ ներդրումների հետ այնքան ժամանակ, քանի դեռ որպես հիմնական ներդրող հանդես չի եկել հանրապետության բնակչությունը: Ինչ վերաբերում է արտաքին պաշտոնական օգնությանը, այդ թվում՝ միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրված վարկեր:

ապա դրանց նվազումը, ոչ բարձր արդյունավետությունը, վարկերի թանկացման միտումը թույլ չեն տալիս այդ միջոցները համարել տնտեսության երկրաժամկետ ֆինանսավորման հուսալի աղբյուր:

Այս պարագայում ներդրումային բնագավառի հետագա զարգացումը զգալիորեն կախված է պետական ներդրումային քաղաքականության իրականացման արդյունավետությունից: Այդ քաղաքականության հիմնական ուղղությունները պետք է լինեն ձեռնարկություններին վարկային և հարկային լծակների միջոցով պետական աջակցության տրամադրումը, որը կնպաստի ներդրումային ծրագրերի ֆինանսավորման համար ձեռնարկությունների խնայողությունների ներքին /սեփական/ աղբյուրների դերի, կենտրոնացված ներդրումային միջոցների օգտագործման նպատակայնության բարձրացմանը, ներդրումների տնդափոխումը և ներդրումային ծրագրերի ֆինանսավորումը մրցութային կարգով իրականացմանը, անհատույց բյուջետային ֆինանսավորման և վարկի տեսքով պետական բյուջեից ուղղվող միջոցների նպատակային օգտագործման նկատմամբ պետական հսկողության ուժեղացմանը: Հանրապետությունում ներդրումային գործունեության ակտիվացումը կապահովի տնտեսական աճ՝ խթանելով շուկայական ենթակառուցվածքների զարգացումը և դրանց տնտեսական գործունեության արդյունավետության բարձրացումը:

Վերջում մնում է հուսալ, որ հանրապետության տնտեսության պետական կարգավորման համակարգի կատարելագործման ուղղությամբ կատարված առաջարկությունները կբարելավեն ԼՂՀ ներդրումային մթնոլորտը և չնայած ներքին տնտեսա-քաղաքական հիմնախնդիրների առկայությանը՝ երկրի տնտեսությունը կթևակոխի զարգացման որակապես նոր փուլ:

Օգտագործված գրականություն

1. Տնտեսական բարեփոխումների առանձնահատկությունն ու փուլերը Հայաստանում 1991- 1998թթ., << վիճակագրություն, պետական ռեզիստրի և վերլուծության նախարարություն, Երևան, 1999թ., էջ 31
2. «Էկոնոմիկա» տնտեսական գիտագործնական հանդես, Երևան, 2.2000
3. «Էկոնոմիկա» տնտեսական և գիտագործնական հանդես, Երևան, 3.2000
4. «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, Երևան, թիվ 1, 2002
5. «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, Երևան, թիվ 1, թիվ 10, 2002.
6. ԼՂՀ վիճակագրության, պետական ռեզիստրի և վերլուծության պետական վարչություն. «ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2001թ. հունվար- դեկտեմբերին»

Осуществление государственного регулирования экономики в НКРв современном этапе перехода

Р.Я.Мангасарян

Резюме

Анализируются недостатки в системе государственного регулирования экономики, как субъективного, так и объективного характера. Предлагаются пути совершенствования системы управления и повышения эффективности государственного регулирования экономики, в частности, в сфере обеспечения макроэкономической стабильности, формирования инвестиционного активного климата и т. д.

Էկոնոմիկայի պետական կարգավորման առանձնահատկությունները ԼՂՀ-ում անցման ժամանակակից փուլում

Ռ.Յա. Մանգասարյան

Անվտիում

Հոդվածում քննարկվել է տնտեսության պետական կարգավորման համակարգին բնորոշ ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ բնույթի թերությունները: Առաջարկվել է տնտեսության պետական կարգավորման և կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման ուղիները, մասնավորապես մակրոտնտեսական կայունության ապահովման, ներդրումային ակտիվ դաշտի ձևավորման և այլ բնագավառներում: